

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՌՈՎՅԱԼԵ ՄԱՎԸՆ, ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՌԵԿՏՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵՐՋԵՍՈՐ
ՍԵՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՆՏԵՑՅԱՆ

Երևան/3



15 նոյեմբերի, 2021

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾՈՒՄ

Գոհար Կարենի Սահակյանի «Հակոբ Կարապենցի փոքր արձակը, գրական առնչություններ» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15.11.2021 թ. թիվ 3 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, բ.գ.դ., պրոֆ. Սարտին Գիլավյանը, բ.գ.թ., դոցենտներ Նաիրա Խաչատրյանը, Քնարիկ Աբրահամյանը, Լուսինե Գալստյանը, Արմենուհի Մուրադյանը:

ԼՄԵՑԻՆ՝ Գոհար Կարենի Սահակյանի «Հակոբ Կարապենցի փոքր արձակը, գրական առնչություններ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Մ. Աբելյանի անվան Գրականության Ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գրականագիտության գծով 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Ս. Դանիելյանը, բ.գ.դ., պրոֆ. Մ. Գիլավյանը, դոցենտներ Ն. Խաչատրյանը, Ք. Աբրահամյանը, Ա. Մուրադյանը:

Նշվեց, որ Գոհար Կարենի Սահակյանի «Հակոբ Կարապենցի փոքր արձակը, գրական առնչություններ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը քննարկվում է երկրորդ անգամ, եւ դրական է, որ ատենախոսը հաշվի է առել

նախորդում արված էական դիտողությունների մի որոշ մասը՝ սկսած խորագրի ձեւակերպումից:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից եւ կազմում է համակարգչային 136 էջ: Գլուխներն ունեն հետեւյալ խորագրերը՝ «Տարագրության թեման եւ գոյապաշտական մոտիվները Կարապենցի պատմվածքներում. «Անծանոթ հոգիներ» շարքը», «Տարագրության գեղարվեստական տարեգրությունը. «Նոր աշխարհի հին սերմնացանները» շարքը», «Քաղաքակրթական ճգնաժամի պատկերը Կարապենցի պատմվածքներում. «Միջնարար» եւ «Ամերիկյան շուրջպար» շարքերը»:

Աշխատանքն ունի արդիական հետաքրքրությունների ուղղություն, կարող է նոր ու ուշագրավ գրապատմական զուգահեռների ու առնչությունների դուռ բանալ, թեպետ թեման նորույթ պիտի որ չբերեր, հենց թեկուզ այն պատճառով, որ վերջին տարիներին «Հակոբ Կարապենցի ստեղծագործությունը» թեմայով պաշտպանվել է թեկնածուական աշխատանք: Հարկ է, որ ԲՈԿ-ը ուշադրություն դարձնի եւ վերահսկողություն սահմանի նման համընկնումների եւ կրկնությունների բացառման ուղղությամբ:

Հեղինակը ջանացել է Հ. Կարապենցի փոքր արձակի ճանապարհով երեւան հանել տարագրությունը իբրեւ գոյապաշտական ծիր՝ հենց դրա ոլորտում տեսնելով գրողի ստեղծագործությունն առհասարակ: Երկրորդ գլխում եւս տարագրությունը շարունակական վերլուծության է արժանացել՝ արդեն ազգային մտածողության սահմաններում, սահմանակցվել տարեգրության ժանրային մոտեցումներին:

Վերջին գլխում արդեն Գ. Մահակյանը մոտենում է քաղաքակրթական ճգնաժամին Հ. Կարապենցի բերած հարցադրումներին: Այս հատվածում վերհանված են ամերիկյան կեցության վայրիվերումներն անցյալ դարակեսին, ուր մարդը մնում է «օտար» իր նկարագրով, իր ապրելակերպով:

Աշխատանքի առավելություններից մեկը դիտում ենք գրողի փոքր արձակում եղած տեղաշարժերի արձանագրումը: Դրական է նաեւ այն, որ ատենախոսը ներկայացնում է հայրենի եւ սփյուռքյան տարբեր մոտեցումներ (Ս. Սարինյան, Մ. Թյոլոյան, Գր. Հակոբյան, Վ. Գաբրիելյան, Ռ. Արիստակեսյան եւ ուրիշներ)՝ փորձելով դրանց կողքին երեւան հանել գնահատության իր կերպերը: Մեր դիտարկումներից հետո, թվում էր,

ատենախոսը պիտի առանձին ուշադրություն դարձնե Ա. Արամունի-Քեշիշյանի «Հակոբ Կարապենց, աշխարհընկալումը եւ արվեստը» (1999), Կ. Արզույանի «Հայելիներ» (2010), Ն. Սիմոնյանի «Հակոբ Կարապենցի ստեղծագործությունը» (2019) ուսումնասիրություններին, Ա. Ղազարյանի կազմած մատենագիտությանը (1999), սակայն բոլոր դեպքերում միայն թվարկումներ են (էջ 6-7):

Ատենախոսության ներածական հատվածում ավելի շատ փորձ է արվում ցույց տալ Հ. Կարապենցի առնչությունները այլ գրողների հետ, մասնակի՝ նրա փիլիսոփայական մտեցումները, որոնք հախտուն են մատուցված եւ անհարկի ծավալ են ավելացրել այդ հատվածի համար՝ հասցնելով 17 էջի, թեպետ նկատում ենք շարադրանքի որակական փոփոխություն: Նորից անհասկանալի է մնում սեղմագրում աշխատանքի մեթոդաբանության մեջ «...չսահմանափակվելով միայն հայ, սփյուռքահայ կամ ամերիկահայ գրական համապատկերով» (էջ 3) բնութագրումը: Ի՞նչ է, նշված եզրույթները տարբե՞ր են:

Մեր կարծիքով, մի փոքր մեղմ, բայց նորից շարունակում է վերամբարձ ու հավակնոտ մնալ «մեր առջեւ *խնդիր* է դրված եղել նաեւ Հ. Կարապենցի «փոքր արձակը» դիտարկել ոչ միայն որպես ինքնաբավ, ինչը մեր կարծիքով նրա մասին գրված հոդվածների մեծամասնության հիմնական թերությունն է» (էջ 9) միտքը: Դատողությունների մեջ երբեմն չմարսված, մեկը մյուսի հետ իմաստներով չշաղկապված մտքեր են սպրդում: Օրինակ՝ «Ինչպես Վիլյամ Սարոյանին են հաճախ փորձում դիտարկել որպես օտարագիր հայ գրող, այնպես էլ հայագիր Կարապենցին, որոշ վերապահումներով, իհարկե, կարող ենք համարել հայագիր ամերիկացի գրող...» (նույն տեղում): Դեռ մի կողմ նախադասության տրամաբանական սխալները, բերվում է եւս մեկ անհաջող բացատրական Ա. Արամունի-Քեշիշյանի միջնորդությամբ, թե Կարապենցն «ամերիկյան նոր գրականության տիպիկ ներկայացուցիչ կարող էր համարվել, եթե գրեր անգլերեն լեզվով»: Լավ է ասված՝ «եթե գրեր անգլերեն լեզվով» (նույն տեղում):

Անհասկանալի են կերպարի «կենդանի» լինելու մասին վերացական դատողությունները. «Իհարկե Կարապենցի հերոսներին դիտել որպես խորհրդանիշներ գուցե այնքան էլ ճիշտ չէ,- գրում է ատենախոսը,- այնքան կենդանի

են նրանք. պարզապես հեղինակն իր կերպարներին կարողանում է բարձրացնել սիմվոլի աստիճանի» (էջ 65): Միմվոլն ու կերպարի «կենդանի» լինելը հակասում են:

Արդյո՞ք արդարացված է ընդհանրացումը, որ «...թե՛ Շահնուրի, թե՛ Կարապենցի պատմվածքների հերոսներն անտուն են» (էջ 31)՝ կապելով դա էքզիստենցիալիզմի այլաբանության հետ, երբ մեկ տող վերելում կասկածի տակ է դնում նույն Շահնուրի էքզիստենցիալիստ լինելը: Առանձնապես արդարացված պատճառաբանության չի դիմանում նաև Հ. Կարապենցի՝ էքզիստենցիալիզմի հաղթահարման բացատրության փորձը (էջ 52):

Վրիպումներ հանդիպում են նաև սեղմագրում: Մեր կարծիքով, երրորդ գլխի բովանդակության բացատրականում հանդիպում ենք չկապակցվող նախադասությունների շարքերի. «...Հերոսներից շատերն ազգությամբ հայ են, բայց հայի կերպարում արդեն բացակայում է ոչ միայն ազգային նկարագիրը, այլև մարդկային բնավորությունն ու խառնվածքը» (էջ 10): Այդ դեպքում ինչո՞վ է Հ. Կարապենցը գրավում ընթերցողին:

Զգույշ պիտի լինել ժանրային ճանաչումների մեջ. Արմեն Լյուբենի «Գիշերային փոխադրություն (տեղափոխություն)»-ը վեպ համարել չի կարելի (էջ 22), վրեպ կա նաև նույն հեղինակի հերոսների «տեղաբաշխման» մեջ՝ տպավորություն ստեղծելով, թե Զարեհը եւ Նորայրը նույն՝ «Նահանջը...» վեպից են (էջ 30):

Եզրակացությունների բաժնում առաջին իսկ ենթակետում կրկնում է Գրիգոր Հակոբյանի՝ արդեն իսկ ներածության մեջ բերված (էջ 3) գնահատականը Կարապենցի վեպերի առիթով՝ արդեն չնշելով գրականագետին: Ստացվում է, որ սա իր եզրահանգումն է: Բացի այդ՝ իմաստ չունի եզրակացությունում անդրադառնալ վեպերին եւ ապրիորի գնահատել, թե դրանք թույլ գործեր են (էջ 130):


Ի՞նչն է ստիպել աստենախոսին Պոլ Վալերիի միտքը մեջբերել Անրի Պերյուշոյի «Վան Գոգի կյանքը» գրքի բնաբանից (էջ 43)՝ դեռ մի կողմ թողած մտքի գոյության «խրավունքը» աստենախոսության էջերում:

Եղիշե Չարենցի անվան ԳԱԹ-ում պահվում է Հակոբ Կարապենցի նամակագրության բավական հարուստ ժառանգություն, որը օգտագործելու դեպքում աշխատանքը կհարստանար նոր անուններով եւ վերլուծական հայեցակետով:

Թե՛ սեղմագրում, թե՛ ատենախոսության մեջ կան մի շարք վրիպակներ, ինչպես օրինակ՝ ատենախոսության պաշտպանության ամիսը՝ «նոյեմբեր», «խմաստովորում» (սեղմագիր, էջ 3), իրար ետեւից հաջորդում են երկարաբան մեջբերումներ (ատենախոսություն, էջ 39-40, 118): Հանդիպում են քերականական-ոճական անհարթություններ, ինչպես՝ «Սփյուռքահայ գրողը բազմաթիվ ազդեցություններ է կրել թե՛ հայ, թե՛ ամերիկյան եւ թե՛ առհասարակ համաշխարհային հայտնի ու անհայտ բազմաթիվ հեղինակներից» (էջ 130):


Մեր եզրակացություններից մեկն այն է, որ Կարապենցի պատմվածքների գուգադրական քննությունը, որպես գեղարվեստական անդրադարձ և գոյաբանական դիտարկում, կիրառելի կարող է լինել սփյուռքահայ եւ համաշխարհային գրականության առնչություններն ուսումնասիրելու տեսանկյունից: Ուշագրավ են առանձին գուգահեռները Ֆ. Կաֆկայի, Ժ.-Պ. Սարտրի, Ս. Բեկետի, Ա. Կամյուի հետ, իրավացիորեն մատնանշված են հայ հեղինակները՝ Շ. Շահնուր, Կ. Ջարյան, օտարագիր Վ. Սարոյան եւ ուրիշներ: Աշխատանքն այցի է ընկնում վերլուծական ինքնատիպ շերտերով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Գոհար Կարենի Սահակյանի «Հակոբ Կարապենցի փոքր արձակը. գրական առնչություններ» թեմայով թեկնածուական ատենախոսության վրա նկատառումներից հետո կատարված աշխատանքը գտնում ենք բավարար: Այն համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին:

 ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆՈՒ ԱՆՎ. ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հաստատում եմ պրոֆ. Ա. Չ. Գամիելյանի ստորագրությունը:




ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԻՍՊԻՐՅԱՆ
Խ. ԱՐՈՅՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ